

Աշխատանքային տարբերակ

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի Գիտական խորհրդի

« _____ » 202-թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

ԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգով սահմանվում և կարգավորվում են «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ուսումնական խորհրդատուի ինստիտուտը, ուսումնական խորհրդատուի իրավունքներն ու պարտականությունները:
- 1.2. Կարգը մշակվել է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ ԿԳ նախարարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի» (2007 թ. հունիսի 19-ի թիվ 588-Ս/Ք հրաման), Հիմնադրամի կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերի:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

- 2.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական համակարգում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանն աջակցելու և ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելու նպատակով ամբիոնի կազմում ստեղծվում է ուսումնական խորհրդատուի ինստիտուտը, որի գործունեության հիմնական ուղղվածությունը և դրույթները սահմանվում են սույն կարգով:
- 2.2. Ուսումնական խորհրդատուն կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ է, ով ունի գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ: Լաբորանտը ևս կարող է լինել ուսումնական խորհրդատու, եթե բավարարում է վերոնշյալ պահանջին:
- 2.3. Ուսումնական խորհրդատուն կարող է կցվել մեկ կամ մի քանի կուրսերի՝ ելնելով ուսանողների թվաքանակից և ամբիոնի մարդկային ռեսուրսների հնարավորություններից:
- 2.4. Ուսումնական խորհրդատուն կցվում է կուրսին և իր գործունեությունն իրականացնում է ուսումնառության ողջ ընթացքում՝ առաջին կուրսից մինչև ավարտական կուրս՝ բակալավրում 4, մագիստրատուրայում 2 տարի ժամկետով:
- 2.5. Ուսումնական խորհրդատուն նշանակվում է ռեկտորի հրամանով մինչև ուսումնական տարվա մեկնարկը:
Ուսումնական խորհրդատուի թեկնածությունը առաջադրվում է ամբիոնի վարիչի կողմից և ներկայացվում Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն:
- 2.6. Ուսումնական խորհրդատուի աշխատանքը համակարգվում է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի վարիչի կողմից:
- 2.7. Ուսումնական խորհրդատուի գործունեությունը դիտարկվում է որպես դասախոսի հասարակական և կազմակերպչական աշխատանք:
- 2.8. Ուսումնական տարվա մեկնարկին (երկշաբաթյա ժամկետում) ուսումնական խորհրդատուն ամբիոնի նիստին ըստ Հավելված 1-ի ներկայացնում է տարեկան աշխատանքային պլան և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ուսումնական խորհրդատուն իրավունք ունի.

3.1.1. մասնակցել անհատական, կուրսային աշխատանքների պաշտպանության, քննաշրջանին, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի հաշվետվությունների և պաշտպանությունների գործընթացներին,

3.1.2. մասնակցել ուսանողի ուսումնական կարգավիճակի, առաջադիմության քննարկման հանձնաժողովների/հանձնախմբերի աշխատանքներին, ուսանող/ներ/ի վարկանիշավորման, խրախուսման հանձնաժողովների/հանձնախմբերի, ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի աշխատանքներին և այլն:

3.2. Խորհրդատուի պարտականություններն են՝

3.2.1. Ամսական առնվազն մեկ անգամ՝ դասացուցակով ամրագրված օրերին, հանդիպել համապատասխան կուրսի հետ և ապահովել հետադարձ կապ:

3.2.2. Ուսանողների համար իրականացնել **տեղեկատվական-իրազեկման հանդիպումներ՝**

3.2.2.1. իրազեկելու համար ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին,

3.2.2.2. ծանոթացնելու համար Հիմնադրամում գործող կրեդիտային համակարգին, գնահատման և բողոքարկման կարգին,

3.2.2.3. իրազեկելու ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների տրամադրման կանոնակարգի մասին (Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի հետ համագործակցությամբ),

3.2.2.4. ծանոթացնելու մասնագիտական կրթական ծրագրին (ՄԿԾ), դրա վերջնարդյունքներին, իրականացման գործընթացին (ՄԿԾ պատասխանատուի հետ համագործակցությամբ),

3.2.2.5. կանխարգելիչ նպատակներով իրազեկելու կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի և գրագողության դրսևորումների մասին:

3.2.3. Մասնակցել ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հանձնաժողով/ներ/ի աշխատանքներին:

3.2.4. Իրականացնելու մատենավարության հետ կապված իր գործառույթները:

- 3.2.5. Ըստ անհրաժեշտության ուսանողներին տրամադրելու տեղեկատվություն ուսուցման գործընթացում կատարվող փոփոխությունների մասին:
- 3.2.6. Քննաշրջանի ընթացքում հետևել ընդհանուր կուրսի, ինչպես նաև առանձին ուսանողների առաջընթացին՝ ըստ ուսման առաջադիմության տարբերակելով առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողներին.
- Ուսանողը առաջադիմող է, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված 30 կրեդիտը:
 - Ուսանողը փորձաշրջանի կարգավիճակում է, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմանը և համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հեռացման (ազատման) և ուսանողական իրավունքների վերականգման» կանոնակարգի՝ հեռացման ենթակա չէ:
 - Ուսանողը ենթակա է հեռացման՝ համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հեռացման (ազատման) և ուսանողական իրավունքների վերականգման կանոնակարգի», եթե փորձաշրջանի կարգավիճակում գտնվելով՝ կիսամյակի լուծարային շրջանի ավարտից հետո դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
- 3.2.7. Հիմնական քննաշրջանի ավարտից հետո ուսումնական խորհորդատուն փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանող/ներ/ի մասին իրազեկում է ամբիոնի վարիչին: Ամբիոնի վարիչի վերահսկողությամբ այդ ուսանող/ներ/ի համար իրականացվում է խորհրդատվություն: Խորհրդատվություն կազմակերպվում է նաև առաջին և երկրորդ լուծարային շրջանների միջև ընկած ժամանակահատվածում:
- 3.2.8. Ուսումնական խորհորդատու հետևում է ինչպես առանձին ուսանողների առաջընթացին, այնպես էլ կուրսի:
- 3.2.8.1. Եթե ուսանողի տարեկան ՄՈԳ-ը նվազում է 30%-ով, ապա ուսումնական խորհորդատուն վերջինիս ուղղորդում է Հիմնադրամի Սոցիալ-հոգեբանական կենտրոն:
- 3.2.8.2. Եթե կուրսը առանձին առարկաներից ցուցաբերում է 50 միավորից ցածր ընդհանուր առաջադիմություն, ապա ուսանողներին ուղղորդում է Հիմնադրամի Սոցիալ-հոգեբանական կենտրոն և հարցը քննարկում ՄԿԾ մեթոդական խորհրդի նիստում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.2. Սույն Կարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատում է Հիմնադրամի Գիտական խորհուրդը:
- 4.3. Սույն Կարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
 Ուսումնական խորհրդատուի գործունեության
 Աշխատանքային պլան
 2023-2024 ուստարի

_____ ֆակուլտետ
 _____ մասնագիտություն
 _____ կուրս

	Գործողություններ	Կատարման ժամանակահատված	Համակատարող	Կատարման մասին տեղեկատվություն
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				
11.				

Ուսումնական խորհրդատու՝

/անուն, ազգանուն/

Ամբիոնի վարիչ՝

/անուն, ազգանուն/